

ՓՈՒՍԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ.Տ. ՎԱԶԳԷՆ Ա.—
ԽՕՍԲԸ ՄԻԻՌՈՆՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ
ԶԳ ՍԵՊՏԵՄԲԵՐ 1991Թ.

Յամուժ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.
ամէն:

"Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ մմա":

Սիրեցեալ հոգեւոր զաւակներ Մեր,

Այսօր, երբ Սուրբ Էջմիածնի կամարների տակ
հաւաքուած, օրհնեցիմք սրբալոյս միւռոնը, յիշեմք
որ շատ դարեր առաջ Սուրբ Գրիգորի՝ մեր
Լուսաւորչի հրաշք տեսիլքով, իջաւ այստեղ Որդին
Աստուծոյ, Փրկիչն մեր Քրիստոս եւ մրա հետ՝ մանւ
լոյսը փառքի:

Այդպէս է, որ Հայաստանում հռչակուեց քրիս-
տոնական հաւատքը իբրեւ պաշտօնական կրօնը համայն
հայ ազգի, որի ծոցում, դեռեւս առաքելական դարից,
սկսել էր տարածուել սուրբ Աւետարանի աստուածային
խօսքը: Բայց մամաւանդ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի
քարոզչութեամբ ու հրաշալի գործունեութեամբ, եւ
հայոց Տրդատ Թագաւորի դարձով ու մկրտութեամբ, մեր
հաւատքը վերջնապէս յաղթանակեց, եւ հիմքը դրուեց
ու կազմակերպուեց Հայաստանեայց Առաքելական Սուրբ
Եկեղեցին, կեցտրոն ունենալով հենց այս տեղը, ուր
իջել էր Միածին Որդին Աստուծոյ:

Այդ օրուամից հայ ժողովրդի հոգու աշխարհը
սկսեց շաղախուել Քրիստոսի Աւետարանի լոյսով:

Այդ օրուամից հայ ժողովուրդը սկսեց ասլրել
հոգեւոր մոր վերածնունդ:

Այդ օրուամից հայ ժողովուրդը սկսեց պայծա-
ռակերպուել եւ դառնալ ստեղծարար ազգութիւն:

Վկայ է պատմութիւնը, որ քրիստոնէութեամբ
հայ ազգը դարձաւ համաշխարհային երեւոյթ:

Այ՛ո, համաշխարհային երեւոյթ, մախ՝ որովհե-
տեւ մա առաջիմը համդիսացաւ, որ 301 թուականին իր
սիրտը բացեց Քրիստոսի Աւետարանի լոյսին ու մոր
հաւատքը հռչակեց ազգային պետական կրօն, իսկ հայոց
Տրդատ արքան, եղաւ առաջին Թագաւորը, որը մկրտուեց
քրիստոնէայ:

Ինչպէս յայտնի է, 313 թուականին Հռոմի
կայսրը՝ Կոստանդիանոս, Միլանի հրովարտակով քրիս-
տոնէութիւնը հռչակեց լոկ արտօնեալ կրօն Հռոմէական
կայսրութեան տարածքի վրայ եւ իմքը մկրտուեց շուրջ
տասը տարի յետոյ միայն:

Հայ ժողովուրդը, քրիստոնէութեամբ, դարձաւ
համաշխարհային երեւոյթ մանւ իր հիմգերորդ դարի
նսկեղարով, երբ աշխարհում կազմաւորուեց ու մառա-
գայթեց մի մոր մշակոյթ, միջազգային ինքնատուկ մոր
ոգեկանութիւն, որի ստեղծած արժեքները իրենց մմա-
յում տեղն են գրաւել միջազգային քաղաքակրթութեան
պատմութեան մէջ միմէն մեր օրերը:

Եւ վերջապէս հայ ժողովուրդը, քրիստոնէու-
թեամբ դարձաւ համաշխարհային երեւոյթ մանւ Վարդա-

մամբ պատերազմով, որ աշխարհի պատմութեամբ հորիզոնի վրայ համդիսացաւ առաջին պատերազմը վասն խղճի, վասն հաւատի ազատութեամբ: Վարդամանց մահատալու— թիւնը հայոց պատմութեամբ մէջ մմաց, միմէն մեր օրերը, խորհրդամիշը մեր ազգի ազատատենէ ոգու, մեր ազգի ամկախութեամբ տենչի:

Այս օրերին, երբ մեր մայր հայրենիքը հոչա— կել է իր պետական ամկախութիւնը, Հայ Առաքելական Եկեղեցին բարձրադադակ ողջունում է այդ հոչակումը, այն գիտակցութեամբ, որ իմքը՝ Հայ Եկեղեցին, իր սկզբնաւորմամբ ժամանակներից միմէն մեր ժամանակ— մերը պահել պահպանել է ամկախութեամբ գաղափարը, հոգեւոր կեանքի մակարդակի վրայ: Դարեր շարունակ բռնատերերի լծի տակ հայ հաւատացեալը իմքն իրեն զգացել է ազատ ու ամկախ միայն իր մայր Եկեղեցու կամարների մերքոյ:

Արդար է հետեւաբար, որ Հայ Եկեղեցին մամա— չուի մախակամ, մախկարապետը մերօրեայ պետական ամկախութեամբ:

Հայ Եկեղեցին, իմքնիշխանութեամբ ու ամկախու— թեամբ գաղափարը իրականացրել է դարեր շարունակ մաեւ այլ Եկեղեցիների հետ իր յարաբերութիւնների մամա— պարհիմ:

Քրիստոնեայ մեծ Եկեղեցիներ, Բիւզանդական շրջանից սկսած, յաճախ ձգտել են իշխել Հայ Եկեղե— ցու եւ հայ ժողովրդի հոգու վրայ ու խափանել մրա ազգային ոգեկանութեամբ ամկախութիւնը: Այդ տեսակե— տից Հայ Եկեղեցու պատմութիւնը մի հերոսամարտ է՝ ընդդէմ մամ օտար Եկեղեցիների մուսնողական ձգտումների:

Հայ Առաքելական Եկեղեցին այսօր էլ եղբայրա— կամ սիրալիր յարաբերութիւններ է կամենում պահել բոլոր քրիստոնեայ քոյր Եկեղեցիների հետ, Էկումե— միկ ոգով, սրբութեամբ պահպանելով սակայն իր դաւա— մամքը եւ իր մերքին վարչա—կազմակերպչական ազգային ամկախութիւնը: Հայ ժողովուրդը երբեք պիտի չկամե— մայ կախմամբ մէջ լիմել այլ Եկեղեցական կենտրոննե— րից: Եւ երբեք պիտի չհամղութի, որ այլ Եկեղեցի— մեր մարդորսութեամբ զբաղուեն մեր ազգի ծոցում՝ Հայաստանում թէ սփիւրքում:

Հայ Առաքելական Եկեղեցին հմագոյմ վաւերական քրիստոնեական Եկեղեցիներից մէկն է եւ կարիքը չունի դրսից կրօնական—Եկեղեցական ուսմունք մեր— մուծելու:

Այսօր, մեր ամկախ պետութեամբ հոչակումով, այժմէութիւն է ստանում մաեւ հայ ազգի Եկեղեցու հոգեւոր ամկախութեամբ ամրապնդմամբ հրամայականը, իբրեւ հայ ժողովրդի միակ հարազատ Եկեղեցին, ամկախ օտար կրօնական կենտրոններից:

Մեր մոր իմքնիշխան պետութեամբ ամկախութեամբ հիմքերից մէկն է մաեւ հայ ազգի Եկեղեցու ամկախու— թիւնը եւ իմքնիշխանութիւնը:

Մենք դաւանում ենք հաւատամքը՝ մէկ ազատ ազգութիւն,

մէկ ամկախ պետութիւն,

մէկ ամկախ ազգային Եկեղեցի:

Այս հաւատամքով, այս գիտակցութեամբ, Սուրբ Հոգու զօրութեամբ օրհնում այս սրբալոյս միւռոնը Մենք հոչակում ենք ամկախութեամբ միւռոն:

Հայեր, հոգեւոր գաւակներ Մեր, այս սրբազան

միւռոնով՝ միացէ՛ք, եղբայրացե՛ք, եղէ՛ք մէ՛կ կամք, եղէ՛ք մէ՛կ ուրախութիւն, եղէ՛ք մէ՛կ ցաւ: Եղէ՛ք մէ՛կ ազգ, մէ՛կ ըմտամիք, մէ՛կ ժայռացած երդում. եւ հաւատացէ՛ք մեր այս մի բուռ հայրենի հողին ու մրա զաւիքին, սուրբգրական Արարատի հայեացքի տակ, Սուրբ Էջմիածնի օրհնութեամբ ներքոյ:

"Քամգի ո՞ւ՞՞վ է մեր յոյս, կամ խնդութիւն կամ սրակ պարծամաց մերոց, եթէ ոչ դուք ժողովուրդ մեր, առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի մորա զաւստեամբ: Զի դուք էք փառք մեր եւ խնդութիւն" /Ա. Թեաաղ. Բ. 19—20/: Այժմ եւ միշտ. ամէն:

Վազգէն Ա. Կաթողիկոս
Ամենայն Հայոց

ՀՐԱԻՐ

Ծո՛ւ՛կ՝ խաղաղ ու խոհուն, դուն մարդուն
Հըրաւէ՛ր ըզգաստման, շուրջըդ՝ մօտն
Ու հեռուն մինչ հրթիռ մահասփիւռ,
Դժոխքի, ակերի կը մատնէ
Մարդուն կեանքն ու աշխարհ:

Ծո՛ւ՛կ՝ հրաւեր զգաստացման ...
Հսկայ ժայռն փոթորկուն Ովկէանէն
Դուրս ցցուած, ապաւեն է նոյնպէս,
Ուր խաղաղ ու խոհուն կը հանգչին
Զոյգ տատրակ — հրաւեր զգաստութեան:

Փրկչին ձեռքն ու ձայնն է հրպած, Ծո՛ւ՛կ՝
Ափերուդ ու մարմնիդ, պատգամով
Հրաշագործ՝ գազան մարդն իր եղբօր
Մէջ պատկերն որ տեսնէր Արարչին:

Թ.Ա.Մ.